բանալ յօտար երկրի, յանձնելով զմեզ կամացն Աստուծոյ լաւ համարեցաք դառնալ առ ժամանակ մի Թաքչիլ ի կողմանս ուրեք։ Եւ երկու ամիս ճանապարհ արարեալ ահաւոր և սարսափելի, մինչև բազում անգամ ողորմութեամբն Աստուծոյ զերծանիլ ի մահուանէ, եկաք ի Կեոլէ քաղաք։ (Հ. Սահակ առ Մեղգոնեան, 1759, 8. [Սեպտ.? տեղի?])։

մժա.

Քաղքիս տէրն ալ մէկ նասխ քրիստոնեայ առօղ մարդ մի է. Թիւրլիւ Թիւրլիւ եասախներով կու չարչարէ զխեղ քրիստոնեայ ռայէները. իրեն կէօրէ ալ զտեր է մէկ ըստամպօլ էֆէնտիսի մի, որ ան ալ քրիստոնէից հասիմ է։ Հիմակ կնքտոց չէտիկ բապուճը կարմիր հանգցնել տուերն. հրէաներուն մաւի չէտիկ բապուճը Թէ կնքտոց և Թէ էրիկ մարդոցը վերցուցին, անոնց ալ սև հագցնել տուերն։ (Մեծ Թագուհի մայրապետ առ չէչիլիա կոյս և. քոյր նորա և. սրբուհի քատրն, աբրահամ, յարութիւն, ռօմաս, տէր Պետրոս և. Հ. Մկրտիչ, 1760 Յունվ. 10. [Կ. Պոլիս])։

մժբ.

Լուաք զի ի մեծէ երկրաշարժէ եղելոյ ի դամասկոս և ի պէյրութ, և ի սայտայ և յերուսաղէմ, բազումք մեռան, և շինուածք կործանեցան։ Լուաք և զյաղթութիւնս Թագուհւոյն ի ձեռն քաջ զօրագլխի իւրոյ Տաունեայ ի սաքսոնիայ։ (Հ. Իգնատիոս առ Մեղգոնեան, 1760 յունվ. 10. [Կ. Պոլիս])։

մժգ.

Գիր առի Հ. Զաքարիայէն Վէնայով, յորում գրէ զայսոսիկ, որ զկնի։ ‖ Շարժ մեծ եղեալ է ի կողմանս սիւրիոյ. և վասն շամ, այսինքն դամասկոսի քաղաքին ասի, Թէ յոյժ մեծ վնաս եղեալ է նմա ի շարժէն, ամենայն ճամիք նորա փլեալք են, և ընդ նոսա նաև այն մեծ ճամին, զորմէ ասի, զոլ շինուած նորա ըստ ամենայն բանի նման շինուածոյ այդր եղեալ եկեղեցւոյ սրբոյն մարկոսի, և մէն մինարէն նորա կործանեալ, զորմէ առասպելաբանեն տաճիկք ընդ այն իջանել քրիստոսի յաւուրն յորում գալոց է առնել զընդհանրական դատաստան։ Այլ և անբաւ տունք այնր քաղաքի փլեալք, և ոյք յոտին երևին մնացեալք, բնաւքն ճաթռտեալք, և կասկածելիք ի բնակիլ, և անհուն մարդիկք մեռեալք ի ներքոյ փլատակաց։ Այն շարժ եղեալ է և ի Թրիպօլիս, ի յանԹաքիայ, և ի սայտայ, և յայլուր յայնս կողմանս. ուստի տաճիկք ստամպօլու ամենեքին սասանեալ կան։ (Մեղգոնեան առ Հ. Մկրտիչ, 1760 փետր. 16. [Ս. Ղազար])։

մժդ.

Սառաֆօղլու Սարգիս վարդապետն աղաչեցեալ յոյժ յիշխանաց մատոյց զպատարագ ի Լուսաւորչի եկեղեցւոջ յուԹերորդ աւուր յայտնուԹեան. և ապայ ի խնդրոյ սառաֆաց ակամայ կամօք պատրիարգին հրաւիրեցաւ յեկեղեցին պալատու, և սկսաւ տալ զքարոզ ի չորեքշաբաԹի օրէ պահոց սրբոյն սարգսի. և խուռն յամենայն կողմանց երԹան ի լսել զքարոզ նորա։ (Հ. Իգն. առ Մեղգոնեան, 1760 փետր. 19. ի Կոստանդնուպօլիս)։